Մեթոդաբանություն 1
Հաստատված է
«Այդի Բանկ» ՓԲԸ Ակտիվների և պարտավորությունների կոմիտե
2026 թվականի թիվ ՆԱՊ-2026/5-121 արձանագրությամբ
Գործում է սկսած 01/07/2026 թվականից

Այդի Բանկ հաշվարկային տոկոսադրույք (ԱԲՀՏ)

Ուժի մեջ է մտնում 01.07.2026թ.

Արժույթ	**ԱԲՀՏ**	Ուժի մեջ է մինչև
ՀՀ դրամ	10.1%	01.01.2027
ԱՄՆ դոլար	4.2%	01.01.2027
Եվրո	2.4%	01.01.2027

Մեթոդաբանություն

«Այդի Բանկ» ՓԲԸ-ի կողմից լողացող տոկոսադրույքների սահմանման համար հիմք հանդիսացող հաշվարկային տոկոսադրույքի սահմանման

Գլուխ 1. Նպատակը

1. Սույն մեթոդաբանության նպատակն է սահմանել **"Այդի Բանկ հաշվարկային տոկոսադրույքի"** (այսուհետ՝ ԱԲՀՏ) հաշվարկման կարգը, որի կիրառումը հնարավորություն կտա հաճախորդներին տրամադրելու երկարաժամկետ վարկային միջոցներ և միևնույն ժամանակ զսպելու Բանկի ակտիվների և պարտավորությունների ժամկետային ռիսկը՝ պայմանավորված տոկոսադրույքների հնարավոր փոփոխությամբ:

Գլուխ 2. ԱԲՀՏ-ի հաշվարկման կարգը և բաղադրիչները ըստ արժույթների

2. ԱԲՀՏ-ի հիման վրա կարող են սահմանվել Բանկի սեփական ռեսուրսներով ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով և Եվրոյով տրամադրվող վարկերի համար բազիսային տոկոսադրույքներ:
3. ՀՀ դրամի, ԱՄՆ դոլարի համար հաշվարկվող **ԱԲՀՏ՝**

$$\text{ԱԲՀՏ} = \text{ՄԿՏ}$$

Որտեղ՝

- **ՄԿՏ** – ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակվող առևտրային բանկերի կողմից ֆիզիկական և իրավաբանական անձանցից ներգրավված «մեկ տարուց ավելի» ժամկետով ավանդների միջին կշռված տոկոսադրույքն է համապատասխան արժույթի համար՝ կլորացնելով ստորակետից հետո մինչև 1 /մեկ/ թվի ճշտությամբ:
  «ՄԿՏ» հրապարակվում է Կենտրոնական բանկի պաշտոնական կայքէջի **«Դրամավարկային և Ֆինանսական վիճակագրություն» բաժնում** (https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx):

4. Եվրոյի համար հաշվարկվող **ԱԲՀՏ՝**

$$\text{ԱԲՀՏ} = \text{ԵՄՏ}$$

Որտեղ՝

- **ԵՄՏ** – ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակվող առևտրային բանկերի կողմից ֆիզիկական և իրավաբանական անձանցից ներգրավված «մեկից հինգ տարի» ժամկետով ավանդների միջին կշռված տոկոսադրույքն է Եվրո արժույթի համար՝ կլորացնելով ստորակետից հետո մինչև 1 /մեկ/ թվի ճշտությամբ:

«ԵՄՏ» հրապարակվում է Կենտրոնական բանկի պաշտոնական կայքէջի **«Դրամավարկային և Ֆինանսական վիճակագրություն» բաժնում** (https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx):

Գլուխ 3. ԱԲՀՏ-ի սահմանումը և կիրառումը

5. ԱԲՀՏ-ն Բանկի կողմից սահմանվում է տարեկան երկու անգամ՝ մայիս և նոյեմբեր ամիսներին՝ հիմք ընդունելով ՀՀ Կենտրոնական բանկի և Եվրոպական կենտրոնական բանկի կողմից հրապարակված տվյալ ամսվան նախորդող ամենաթարմ համապատասխան տոկոսադրույքները:

6. ՀՀ կենտրոնական բանկի կողմից առևտրային բանկերի կողմից ֆիզիկական և իրավաբանական անձանցից ներգրավված «մեկ տարուց ավելի» ժամկետով ավանդների միջին կշռված տոկոսադրույքը 6 ամսվա ընթացքում չհրապարակելու դեպքում ՀՀ դրամի և ԱՄՆ դոլարի համար ԱԲՀՏ-ի հաշվարկը կկատարվի հետևյալ կերպ.

$$\text{ԱԲՀՏ} = \text{ՄԿՏ}^* + \text{Ճշգրտող գործակից}$$

Որտեղ՝

- **ՄԿՏ*** – ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակվող առևտրային բանկերի կողմից ֆիզիկական և իրավաբանական անձանցից ներգրավված «181 օրից մինչև 1 տարի» ժամկետով ավանդների միջին կշռված տոկոսադրույքն է համապատասխան արժույթի համար՝ կլորացնելով ստորակետից հետո մինչև 1 /մեկ/ թվի ճշտությամբ:
  «ՄԿՏ*» հրապարակվում է Կենտրոնական բանկի պաշտոնական կայքէջի **«Դրամավարկային և Ֆինանսական վիճակագրություն» բաժնում** (https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx)
- **Ճշգրտող գործակից** – այլընտրանքային լողացող տոկոսադրույքի անցնելու պահին նախորդող ժամանակահատվածի դրությամբ «$\text{ՄԿՏ}_{n\text{-}m} - \text{ՄԿՏ}^*_{n\text{-}m}$» մեծություն, **որտեղ՝**
  - ✓ **n-ը՝** այլընտրանքային լողացող տոկոսադրույքի անցնելու պահն է,
  - ✓ **m-ը՝** այլընտրանքային լողացող տոկոսադրույքի անցնելու պահին նախորդող ժամանակահատվածն է, որի ժամանակ հրապարակվել են վերոնշյալ տոկոսադրույքները,
- Ի դեպ Ճշգրտող գործակիցը հաշվարկվում է միայն այլընտրանքային լողացող տոկոսադրույքին անցնելու պահին և ֆիքսվում որպես հաստատուն մեծություն՝ այլընտրանքային լողացող տոկոսադրույքի կիրառման ընթացքում:

7. ՀՀ կենտրոնական բանկի կողմից **Եվրո արժույթով** տոկոսադրույքը 6 ամսվա ընթացքում չհրապարակելու դեպքում Եվրոյի համար ԱԲՀՏ-ի հաշվարկը կկատարվի հետևյալ կերպ.

$$\text{ԱԲՀՏ} = \text{ԵՄՏ}^* + \text{Ճշգրտող գործակից}$$

Որտեղ՝

- **ԵՄՏ*** - հաշվարկվում է հետևյալ կերպ՝ 50% ESTR կամ €STR (euro short-term rate) + 50% ԱՄՆ դոլարի համար հաշվարկվող ԱԲՀՏ
- **ESTR կամ €STR** – Եվրոպական կենտրոնական բանկի կողմից հրապարակվող Եվրոյով օվերնայթի փաստացի տոկասադրույքն է, որն իրենից ներկայացնում է միջազգային շուկայում Եվրոյով օվերնայթների փաստացի գործարքների միջին կշռված տոկոսադրույքը՝ կլորացվում է ստորակետից հետո մինչև 1 /մեկ/ թվի ճշտությամբ:
- **«ESTR»** հրապարակվում է Եվրոպական կենտրոնական բանկի պաշտոնական կայքէջի **«Ֆինանսական շուկաներ և տոկոսադրույքներ» բաժնում:** (www.ecb.europa.eu/stats/financial_markets_and_interest_rates/euro_short-term_rate/html/index.en.html):

- **Ճշգրտող գործակից** – այլընտրանքային լողացող տոկոսադրույքի անցնելու պահին նախորդող ժամանակահատվածի դրությամբ «**ԵՄՏ$_{n-m}$ – ԵՄՏ*$_{n-m}$**» մեծություն, **որտեղ՝**
  - ✓ **n-ը՝** այլընտրանքային լողացող տոկոսադրույքի անցնելու պահն է,
  - ✓ **m-ը՝** այլընտրանքային լողացող տոկոսադրույքի անցնելու պահին նախորդող ժամանակահատվածն է, որի ժամանակ հրապարակվել են վերոնշյալ տոկոսադրույքները,

- Ի դեպ Ճշգրտող գործակիցը հաշվարկվում է միայն այլընտրանքային լողացող տոկոսադրույքին անցնելու պահին և ֆիքսվում որպես հաստատուն մեծություն՝ այլընտրանքային լողացող տոկոսադրույքի կիրառման ընթացքում:

8. ԱԲՀՏ-ն փոփոխվում է այն դեպքում, եթե ԱԲՀՏ հիմքում ընկած տոկոսադրույքը՝ Բանկի կողմից հրապարակած նախորդ ԱԲՀՏ ցուցանիշի հիմքում դրված տոկոսադրույքի համեմատ փոփոխվել է 1% և ավելի տոկոսային կետով՝ ՀՀ դրամի համար ու 0.5% և ավելի տոկոսային կետով՝ ԱՄՆ դոլարի և Եվրոյի համար:
9. Սույն մեթոդաբանությունը գործում է այն վարկերի և լողացող տոկոսադրույքով տրամադրվող այլ վարկային գործիքների համար, որոնք հաստատվել են մինչև 15/07/2022թ: